Հայաստանի Հանրապետության
Գիտությունների Ազգային
Ակադեմիայի Արևելագիտության
ինստիտուտ պետական ոչ
առևտրային կազմակերպություն

Գորիսի պետական համալսարան
պետական ոչ առևտրային
կազմակերպություն

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2025

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Գիտությունների Ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտը, որպես ակադեմիական բարձր վարկանիշ ունեցող գիտական կազմակերպություն, իր առաքելությունն է համարում ոչ միայն գիտական առաջընթաց ապահովելը, այլև ազգային մակարդակով գիտահեն կրթության հասանելիության ընդլայնումը: Հաշվի առնելով այս սկզբունքը՝ Ինստիտուտը միանշանակ նպատակադրված է աջակցել մարզային բուհերի գիտակրթական գործունեության, ներուժի հզորացմանը:

Սույն հուշագրով Ինստիտուտը վերահաստատում է իր սկզբունքային դիրքորոշումը՝

- աջակցել ՀՀ մարզային բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական ներուժի զարգացմանը,
- խթանել գիտակրթական համակարգի համաչափ զարգացումը,
- նպաստել պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման, ինչպես նաև երիտասարդ մասնագետների պատրաստման աշխատանքներին:

Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպության և *Գորիսի* պետական համալսարանի միջև

Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպության՝ (այսուհետ՝ Ինստիտուտ), ի դեմս ինստիտուտի տնօրեն Գոհար Իսկանդարյանի, ով գործում է Ինստիտուտի կանոնադրության հիման վրա մի կողմից, և «Գորիսի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Համալսարան), ի դեմս ռեկտոր Տիգրան Վանդունցի, ով գործում է Համալսարանի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ՝ «Կողմեր»), կարևորելով ՀՀ գիտության և կրթության ոլորտների միջև կապերի ամրապնդման, մասնագիտական կարողությունների արդյունավետ օգտագործման և առաջավոր փորձի փոխանակման

անհրաժեշտությունը, կնքեցին համագործակցության հուշագիր (այսուհետ՝ Հուշագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Հուշագրի առարկան Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիման վրա Կողմերի համագործակցության նպատակի, գործընկերության հիմնական ուղղությունների, Կողմերի իրավունքների և պարտավորությունների սահմանումն է:

2. ՀՈՒՇԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Հուշագրի նպատակը Կողմերի միջև կրթական, գիտահետազոտական ոլորտներում գործընկերային հարաբերությունների հաստատումն է, համագործակցության ծրագրերի իրականացումը՝ Հուշագրի 2.2. կետում նախատեսված ուղղություններով:

2.2. Կողմերի համագործակցության հիմնական ուղղություններն են.

ա) համատեղ գիտահետազոտական ծրագրերի իրականացում,

բ) սեմինարների, թեմատիկ քննարկումների կազմակերպում,

գ) համատեղ հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպում,

դ) Արևելագիտության ինստիտուտի և Համալսարանի գիտական պարբերականներում գիտական հետազոտությունների արդյունքների հրատարակում,

ե) Արևելագիտության ինստիտուտում Համալսարանի ուսանողների գիտահետազոտական պրակտիկայի կազմակերպում, (մեկօրյա պրակտիկան անվճար, իսկ երկարաժամկետը՝ վճարովի հիմունքներով)

զ) ասպիրանտական թեզերի ղեկավարում և համաղեկավարում,

է) գիտական և մեթոդական գրականության և մասնագիտական զարգացմանը նպաստող էլեկտրոնային աղբյուրների տրամադրում, գիտական աշխատությունների, դասագրքերի, ուսումնական նյութերի, ուսումնամեթոդական ձեռնարկների մշակում և խմբագրում,

ը) կրթական, գիտական ուղղվածության դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացում,

թ) մյուս Կողմին արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում՝ հնարավորության դեպքում, որպես գործընկեր ներգրավում,

ժ) Կողմերի իրականացրած այլ կրթական, գիտական, մշակութային ծրագրերին, կազմակերպած միջոցառումներին մասնակցություն,

ի) Հաշվի առնելով Ինստիտուտի գիտահետազոտական և գիտակրթական աշխատանքների մեծ փորձը և հնարավորությունները հատկապես Հարավային Կովկասի, Մերձավոր և Միջին Արևելքի ուսումնասիրման ուղղությամբ, հարավկովկասյան և մերձավորարևելյան տարածաշրջանի առանցքային տարբեր հիմնախնդիրների հետազոտման, գնահատման և դրանց վերաբերյալ գիտավերլուծական միջոցառումների կազմակերպում:

2.3. Սույն նպատակը և վերոնշյալ ուղղություններով համագործակցությունը չի խոչընդոտում Կողմերի օրենսդրությամբ չարգելված համագործակցության այլ տեսակների զարգացումը, որոնք կարող են առաջանալ հետագայում:

2.4. Երկուստեք հետաքրքրություն ներկայացնող թեմաների և խնդիրների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվության իրականացում:

2.5. Կողմերի գրադարանների, ֆոնդերի համատեղ օգտագործման հասանելիություն: Միջազգային գիտատեղեկատվական շտեմարանների նյութերի փոխանակում:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

3.1. Սույն Հուշագրի նպատակին հասնելու համար Կողմերը համաձայնում են համագործակցել միմյանց հետ հետևյալ ոլորտներում.

ա) մագիստրոսների, ասպիրանտների, հայցորդների, դասախոսների և հետազոտողների ակադեմիական փոխանակում, վերապատրաստում՝ մասնագիտական (գիտակրթական, հետազոտական) պրակտիկա անցնելու համար,

բ) նպաստել գիտական համագործակցության հաստատմանը՝ հարավկովկասյան, Մերձավոր Արևելքի և Հեռավոր Արևելքի տարածաշրջանին վերաբերող փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում,

գ) Կողմերի ներկայացուցիչներին հրավիրել դասախոսություններ կարդալու՝ փորձի և տեղեկատվության փոխանակման համար,

դ) Կողմերի հետազոտողների կողմից տարածաշրջանային անվտանգային արդի հիմնախնդիրների վերաբերյալ դասախոսությունների, վարպետության դասերի (այդ

թվում՝ «առցանց» ռեժիմով) անցկացում,

ե) Հարավկովկասյան, մերձավորարևելյան և հեռավորարևելյան տարածաշրջանի անվտանգային արդի հիմնախնդիրների վերաբերյալ համատեղ կոնֆերանսների, սեմինարների, սիմպոզիումների, կլոր սեղանների անցկացում,

զ) համատեղ աշխատանքի արդյունքների հիման վրա հետազոտական, ուսումնական և մեթոդական նյութերի հրապարակում,

է) հրապարակումների, գիտական հետազոտությունների, ուսումնական գրականության, պարբերականների, ընթացիկ իրադարձությունների մասին տեղեկատվության փոխանակում և գիտական հրապարակումների գրախոսում,

ը) Կողմերին գիտության և կրթության ոլորտում համատեղ կազմակերպվող առաջիկա գիտաժողովների և սեմինարների մասին տեղեկացում:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները սույն հուշագրով ստանձնած իրենց պարտականությունները բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու համար:

4.2. Սույն ոլորտներում իրականացվող աշխատանքների համար Կողմերը չունեն ֆինանսական պարտավորություններ: Հնարավոր ֆինանսական պարտավորությունները յուրաքանչյուր Կողմ իրականացնում է իր հաշվին:

4.3. Կողմերը հնարավոր են համարում ներգրավել պոտենցիալ ֆինանսական գործընկերներ՝ ներառյալ հիմնադրամները:

5.ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

5.1. Հուշագիրը չի կարող փոխվել կամ լրացվել միակողմանիորեն:

5.2. Սույն Հուշագիրը կարող է փոփոխվել և լրացվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ ստորագրելով լրացուցիչ համաձայնագրեր, որոնք կլինեն դրա անբաժանելի մասը, պատշաճ կերպով կկատարեն և կստորագրեն Կողմերի լիազորված անձինք:

6.ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է անժամկետ:

6.2. Սույն Հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ՝ մյուս կողմին գրավոր ծանուցմամբ:

7. ՀՈՒՇԱԳԻՐԸ ՍՏՈՐԱԳՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

7.1. Սույն Հուշագիրը կազմված է հայերենով, կնքված հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

Սույն Հուշագիրը կազմվել է «28» նոյեմբերի 2025 թ., ք.Երևան:

«Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ	**«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ**
Հասցե՝ ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4	Հասցե՝ ՀՀ, Գորիս, Ավանգարդ 2
Հեռ.՝ (+374 10) 26-92-59	Հեռ.՝ (+374 284) 2-27-67
էլ. հասցե՝ info@orient.sci.am	էլ.հասցե՝ gorsu1967@gmail.com
Տնօրեն՝ _____ Գ. Իսկանդարյան	Ռեկտոր՝ _____ Տ.Վանդունց
Կ.Տ.	Կ.Տ.